

Always standing by our community



SINCE 1987

Komitas.ca
FUNERAL COMPLEX

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

T 514.331.0400

Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները հանդիպում ունեցան նախարար Փայլո Ռոտրիկէզի հետ



Երկուշաբթի, 29 Յուլիս 2019-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնին մէջ, Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ հանդիպում ունեցան Գանատայի Ժառանգութեան եւ Մշակույթի նախարար տիար Փայլո Ռոտրիկէզի հետ:

Մէկ ժամուան տեւողութեամբ հանդիպումին քննարկուեցան Հայ Դատի Յանձնախումբին յառաջիկայի ծրագրերնրը, այլ համայնքներու հետ փոխ յարաբերութիւններու ընթացքը, Հայաստան-Գանատա երկկողմանի յարաբերութիւններն ու քաղաքական գետնի վրայ յանձնախումբին առաջնահերթութիւնները:

Նախարար Փայլո բարձր գնահատեց Գանատայի Հայ Համայնքին ներդրումը՝ զանազան ոլորտներու մէջ, ինչպէս նաեւ նախարարութեան յառաջիկայ ծրագրերնրուն մասին մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց:

Երկու կողմերը խոստացան շարունակել համագործակցութիւնն ու երկխոսութիւնը՝ քննարկուող հարցերն ու գանատահայ համայնքին վերաբերող ծրագրերը հետապնդելու ի խնդիր:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչ Մհեր Գարագաշեան, Հայ Դատի Օթթաւայի գրասենեակի գործադիր Սեւակ Պէլեան եւ Հայ Դատի Շրջանային յանձնախումբի անդամ Յարութ Դաւիթեան:

Սկիզբ առաւ ՀՅԴ ԳԵՄ-ի Վանաձորի 9-րդ ճամբարը



Երկուշաբթի, 29 Յուլիս 2019-ին, Վանաձորի «Շարլ Ազնաւուր» մշակութային կեդրոնին մէջ սկիզբ առաւ ՀՅԴ ԳԵՄ-ի Վանաձորի 9-րդ ճամբարը, Վանաձորէն եւ շրջակայքէն մօտ 200 պատանիներու եւ Գանատայէն ու Հայաստանէն 22 վարիչներու մասնակցութեամբ:

Առաւօտեան ժամը 10-ին կեդրոնին դռները բացուեցան, եւ տեղի ունեցան երեխաներուն ու պատանիներուն արձանագրութիւնները, ապա ՀՅԴ Կեդրոնական վարչութեան անդամ եւ ճամբարի ընդհանուր պատասխանատու Ալեք Օճանեան բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ եւ ծնողներուն ու պատանիներուն տուաւ հակիրճ բացատրութիւն մը ճամբարի ծրագրին մասին:

Պատանիները բաժնուեցան խումբերու՝ ըստ տարիքի եւ ուղղուեցան դաշտ՝ մարզանքի: Ծաղի դադարէն ետք, ճամբարայիններուն բաժնուեցաւ ՀՅԴ Բիւրոյի Երիտասարդական գրասենեակին կողմէ պատրաստուած ճամբարի յատուկ գրքույկ, որուն մէջէն պատանիները սորվեցան «Մշակ, բանուր» քայլերգը, եւ իրենց փոխանցուեցաւ ՀՅԴ-ի մասին ամփոփ ընդհանուր տեղեկութիւններ:

Ծամբարի առաջին օրուան յայտագիրը փակուեցաւ «Մշակ, բանուր» եւ «Մեր հայրենիք» քայլերգներով:

Յայտարարութիւն Հայաստանի Մէջ Դատարաններուն Ծուրջ Ծաւալած Իրադարձութիւններուն Վերաբերեալ

22 յուլիսին Հայաստանի «Ազատութիւն», «Ազգային օրակարգ», «Երկիր ծիրանի», Հայաստանի դեմոկրատական, ՀՅ Դաշնակցութիւն, «Մէկ Հայաստան», Ռաւակավար ազատական կուսակցութիւնները հանդէս եկած են յայտարարութեամբ՝ մտահոգութիւն յայտնելով երկրին մէջ ստեղծուած դատական իշխանութեան շուրջ ծաւալած իրադարձութիւններուն առնչութեամբ: Յայտարարութեան բովանդակութիւնը կարդալ էջ 3:

Գանատայի Ժառանգութեան նախարար Փայլո Ռոտրիկէզ այցելեց «Հորիզոն»ի խմբագրատուն



Կարդալ էջ 5



Your Passport to Adventure.

2019 Passport TOURING

Selling start from **\$50,900***

LEAP ON IT!

HONDA

GABRIEL

Book your test drive with **Kevorg Asadourian** or **Haig Khobassarian**

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com



MARCHÉ

ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu- DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Յայտարարութիւն Հայաստանի Մէջ Դատարաններուն Ծուրջ Ծաւալած Իրադարձութիւններուն Վերաբերեալ

«Ազատութիւն», «Ազգային օրակարգ», «Երկիր ծիրանի», Հայաստանի դեմոկրատական, ՀՅ Դաշնակցութիւն, «Մէկ Հայաստան», Ռամկավար ազատական կուսակցութիւնները հանդէս եկած են յայտարարութեամբ՝ մտահոգութիւն յայտնելով երկրին մէջ ստեղծուած դատական իշխանութեան շուրջ ծաւալած իրադարձութիւններուն առնչութեամբ:

«Պետական իշխանութեան թեւերի միջեւ հաւասարակշռութեան եւ փոխզուգումների համակարգի կայացումն ու անխափան գործունէութիւնը ցանկացած երկրի զարգացման գրաւականներէն է: Օրէնսդիր, գործադիր ու դատական համակարգերի անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը պարտադիր պայման են՝ բացառելու իշխանութեան կեդրոնացումը մէկ քաղաքական ուժի ձեռքում, ինչը երկրում մենիշխանութեան հաստատման հիմնական նախադրեալներէն է: Այս առումով՝ դատարանները եւ դատաւորները նկատմամբ քաղաքական իշխանութեան կողմից ազդեցութիւն գործադրելու ցանկացած փորձ անթոյլատրելի է:

Արդարադատութեան արդիւնաւէտ գործունէութեան կարեւորագոյն երաշխիքներից է դրա ապաքաղաքական բնոյթն ու անկախութիւնը օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնից: Ի հակադրութիւն միջազգայնօրէն ճանաչուած եւ սահմանադրօրէն ամրագրուած այս սկզբունքների, ներկայիս քաղաքական իշխանութիւնը, ժողովրդավիշխանութեան եւ փոստական դէմ պայքարի անուան տակ շահարկելով դատաւորական համակարգում առկայ եւ տարիների ընթացքում կուտակուած խնդիրները, արատաւոր երեւոյթները, ըստ էութեան, ձեռնամուխ է եղել ծայրայեղ գործողութեան՝ դատական իշխանութեան լիակատար իւրացմանը:

Սահմանադրական կարգի պահպանման եւ անհրաժեշտ անվտանգային իրավիճակի ապահովման ծիրին մէջ անընդունելի եւ դատապարտելի է, երբ՝

1. Քաղաքական իշխանութեան ուղղակի մասնակցութեամբ կազմակերպւում է դատարանների արգելափակում, խոչընդոտում է դատաւորների եւ փաստաբանների բնականոն աշխատանքը, ճնշում է գործադրում Բարձրագոյն դատական խորհրդի անդամների վրայ:

2. Անթաքոյց նպատակադրմամբ փորձ է արւում ձեւաւորել սեփական քաղաքական շահերը սպասարկող Սահմանադրական դատարան: Այս նպատակով Ազգային ժողովի քաղաքական մեծամասնութիւնն, ըստ էութեան, պարտադրեց հանրապետութեան նախագահին՝ առաջադրել Սահմանադրական դատարանի՝ իշխանութեան քաղաքական հայեացքներն ու գործելու ուղի որդեգրած դատաւորի թեկնածու, որն իր ընտրութեան յաջորդ օրն իսկ ինքն իրեն ապօրինաբար հռչակեց Սահմանադրական դատարանի նախագահ:

3. Դատական համակարգի նուաճման քաղաքական այս ծրագրի իրագործմանը լծուել են նաեւ իշխանամերձ մամուլն ու փորձագիտական ուղղորդող մի շրջանակ, որն առանց յստակ հայեցակարգի, առաջ է քաշում եւ փորձում դատական բարեփոխումների քաղաքական օրակարգը փոխարինել ոչ իրատեսական, երկրի իրաւական անվ-

տանգութեանը սպառնացող գաղափարներով՝ ներառեալ անցումային արդարադատութիւնը, դատաւորների համատարած վեժիկը (զտում), առանց մեղադրական դատավճռի գոյքի բռնազանձումը: Արհամարհելով իրաւունքի դերակալութեան, անմեղութեան կանխախելիութեան սկզբունքներն ու աղաւաղելով դատաւորական համակարգի բնականոն բարեփոխման օրակարգը՝ հարուածի տակ են դրւում Հայաստանի Հանրապետութեան գործող իրաւակարգը եւ երկրի կայունութիւնը:

4. Վերոյիշեալ գործողութիւնները հարուածում են նաեւ Հայաստանի միջազգային հեղինակութեանը, հակասում են երկրի ստանձնած միջազգային պարտաւորութիւններին եւ խաթարում մեր պետականութեան հիմքերը:

Ըստ այդմ,

1. Պահանջում ենք Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի քաղաքական մեծամասնութիւնից եւ կառավարութիւնից՝ հրաժարուել պետականութեանը սպառնացող գործողութիւններից, նախաձեռնել դատական համակարգի համապարփակ բարեփոխումների փաթեթի մշակում, հանրային եւ մասնագիտական քննարկումներ՝ նպատակադրելով անկախ եւ քաղաքական ազդեցութիւնից զերծ դատարանների ձեւաւորումը՝ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան պահանջների եւ Հայաստանի ստանձնած միջազգային պարտաւորութիւնների խստիւ պահպանմամբ:

2. Պահանջում ենք հանրապետութեան նախագահից՝ որպէս պետութեան գլուխ եւ Սահմանադրութեան պահպան-

ման հետեւող անհատ եւ բացառապէս համապետական ու համազգային շահերով առաջնորդող բարձրագոյն պաշտօնատար անձ, ուղերձով դիմել Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովին՝ դատական իշխանութեան շուրջ ստեղծուած լարուած մթնոլորտը լիցքաթափելու, արդարադատութեան իրականացմանը խոչընդոտող հանգամանքները, դատարանների եւ դատաւորների՝ ներառեալ Սահմանադրական դատարանի բնականոն աշխատանքը խաթարող գործընթացները կասեցնելու, արդարադատութիւն իրականացնելիս նրանց անկախութիւնը երաշխաւորող սահմանադրական չափանիշների ամբողջական ապահովման նպատակով:

3. Դիմում ենք քաղաքական ուժերին, քաղաքացիական հասարակութեանը եւ երկրի ապագայով մտահոգուած մեր հայրենակիցներին՝ մերժել իրաւական պետութեան կայացմանը խոչընդոտող գործողութիւնները, համախմբուել դատական համակարգի բնականոն բարեփոխումների օրակարգի շուրջ՝ յանձնառու լինելով ցուցաբերել անհրաժեշտ մասնագիտական օժանդակութիւն դրանց իրականացմանը եւ ձեւաւորել իրաւական անվտանգութեան համապարփակ հայեցակարգ:

Գործող քաղաքական իշխանութեան կողմից դատական իշխանութեան նկատմամբ ոտնձգութիւնների շարունակուելու դէպքում՝ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան եւ օրէնքներու շրջանակներում հասու միջոցներով հակազդելու ենք բոլոր ապօրինի գործողութիւններին եւ պատասխանատուութեան ենք կանչելու կազմակերպիչներին:

Ascenseur **Adams** Elevator Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Voyages **HAIG** Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

NEW APARTMENTS OF 4 ½ FOR RENT

CORNER OF BOUL. DE L'ACADIE AND HENRI BOURASSA WITH EASY ACCESS TO HIGHWAY 15.

INCLUDES: APPLIANCES, AIR CONDITIONING SYSTEM, CENTRAL HOT WATER, INDOOR PARKING, LIGHT FIXTURES, FITNESS ROOM, ROOFTOP TERRACE.

FOR MORE INFO CALL ANI OR GILBERT AT: 450 969-3251

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Դերձակութեան "Arthur Montreal" հաստատութիւնը կարիք ունի դերձակներու, կարողներու եւ ձեւողներու: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին: Վարժանք աքիւստի

TAILORS & SHIRT MAKERS NEEDED

"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers are looking for experienced seamstress, cutters and tailors. If interested, please call 514-843-0522. Training will be provided.

Մոնթրեալի ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի սկսուտական Տարեկան Բանակում

Սկսուտական գործունէութեան մէջ յատուկ իմաստ եւ նշանակութիւն ունի բանակումը, որուն ընթացքին իւրաքանչիւր սկսուտ տարուան ընթացքին ստացած գիտելիքները ի գործ կը դնէ, յաւելեալ գիտելիքներ կը ստանայ, որոնք անջնջելիորէն տեղ կը գրաւեն իր մտքին մէջ, որովհետեւ իր քոյր-եղբայրներուն հետ միասնաբար սորված է զանոնք: Ահա թէ ինչո՞ւ ամէն սկսուտ անհամբեր կը սպասէ տարուան այս օրերը:

Այս համոզումով, այս տարի եւս, ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի Սկսուտ Խորհուրդին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ տարեկան բանակումը, որուն մասնակցեցան աւելի քան 220 սկսուտներ եւ խմբապետական կազմի անդամներ:

Բանակումը տեղի ունեցաւ Awakamenj Mino գեղատեսիլ բանակավայրէջն ներս: Ան սկիզբ առաւ Շաբաթ, 20 Յուլիս 2019-ին: Բոլոր բանակողները հաւաքուեցան Ս. Յակոբ Ազգ. վարժարանի շրջաբակը եւ անհրաժեշտ դասաւորումները ընելէ ետք՝ դպրոցական փոխադրակառքերով ու բեռնակառքերով ուղղուեցան բանակումի վայր: Ակնյայտ էր բոլորին անասանաւ ուրախութիւնը. թէեւ կային որոշ սկսուտներ, որոնք իրենց առաջին փորձաւորութիւնը ապրելով, թաքուն վերապահութիւն մը ունէին. բարեբախտաբար այդ մէկը չէր խանգարեր, որ նոյն ոգեւորութիւնը պահէին՝ շնորհիւ իրենց փորձաւոր քոյր-եղբայրներուն:

Սկսուտ Խորհուրդի անդամները իրենց անձնական գործերն ու մտահոգութիւնները մէկզի դրած, սիրայօժար մասնակցութիւն բերին այս միջոցառման, մէկ կողմէն օգնութեան ձեռք երկարելու խմբապետական կազմին, միւս կողմէն ալ հոգատար ծնողքի դերը կատարելու: Ընթացքով ծնողները իրենց սիրասուն զաւակները վստահած էին անոնց: Իսկ օրուան գործունէութեան մասին տեղեկութիւնները դիմատետրի (facebook) միջոցաւ ծնողներուն կը փոխանցէին:

Քանի մը օր ետք Ս. Յակոբ եկեղեցւոյ բակէն ներս կրկին եռուզեռ մը սկսաւ: Այս անգամ կարգը եկած էր



թիւով 45 Զրչուններուն եւ 70 ծնողներուն: Զրչունները պիտի երթային ու միանային իրենց երէց քոյր-եղբայրներուն ու բանակումի մնացեալ օրերը միասին անցընէին. իսկ ծնողները պիտի երթային ներկայ ըլլալու խարուհահանդէսին, որ սկսուտներուն շատ սիրելի արարողութիւններէն մէկը կը համարուի:

Եւ այսպէս, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, փոխադրակառքը մուտք գործեց բանակավայր, խանդավառութիւն ստեղծելով ամէն գի: Կարօտի ողջագուրումներն ու ուրախութեան արցունքները չէին պակսեր:

Ծնողները հրաւիրուեցան դիտելու սկսուտներուն տողանցքն ու դրօշակի արարողութիւնը: Բանակումի պատասխանատու ք. Թինա Տարտարեան հրաւիրեց Սկ. Խորհուրդի ատենապետ եղբ. Բարգէն Թօփեան, որ բարի գալուտ մաղթեց եւ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն՝ իրենց զաւակները անվերապահօրէն իրենց վստահելուն համար, ապա հրաւիրեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Լէոն Արապեան՝ փոխանցելու իր խօսքը: Եղբ. ատենապետը գնահատեց խմբապետական կազմի բոլոր անդամները, որոնք իրենց տարեկան արձակուրդի թուականը յարմարեցուցած էին, որպէսզի համընկնի բանակումի թուականին եւ նախընտրած էին զայն ան-

ցընել իրենց սկսուտներուն հետ. ան նաեւ խրախուսեց բանակողները, որպէսզի աշխուժօրէն ձեռք բերեն գիտելիքներ ու հրաւիրեց բոլորը մաս կազմելու մասնաճիւղի կազմակերպած յառաջիկայ ձեռնարկներուն՝ Գաղտնագնացութեան, 18 Օգոստոսին եւ մասնաճիւղի տարեկան հաւաք-խրախմբանքին, 26 Հոկտեմբերին: Վերջապէս խօսք առաւ Շրջ. Սկ. Խորհուրդի ատենապետ եղբ. Արթի Գազարեան, որ գոհունակութիւն յայտնեց ի տես մեծաթիւ բանակողներուն եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղի խմբապետուհի ք. Թինա Տարտարեանին, որ բժախնդրօրէն կազմակերպած ու ղեկավարած էր սոյն բանակումը:

Յետոյ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, ներկայութեամբ՝ Շրջ. վարչութեան անդամներ՝ եղբ. Ռիչըրտ Մելքոնեանի, եղբ. Ծորճ Պալէոզեանի, Սկ. Խորհուրդի ատենապետին, Մասնաճիւղի Վարչութեան անդամներուն, Սկ. Խորհուրդի անդամներուն, ծնողներուն եւ ի հարկէ սկսուտներուն: Փակումին հնչեցին Հայաստանի, Գանատայի եւ ՀՄԸՄ-ի քայլերգները:

Սկսուտները մարզանքներ ընելէ ետք պատրաստուեցան ընթերցելու, որմէ ետք հետեւելով սկսուտի դաւանանքի 9-րդ կէտին՝ երգերով ու պարերով խանդավառութիւն ստեղծեցին իրենց շուրջը բոլորը եւ բոլոր ներկաները այդ տրա-

մագրութեամբ հրաւիրեցին խարոյկին շուրջ՝ հո՛ն շարունակելու օրուան ամենահետաքրքրական պահը՝ խարուհահանդէսը:

Օրուան դամատաները՝ ք. Կարին Իմամէճեան եւ եղբ. Սեւակ Թաշճեան մէկիկ-մէկիկ խումբերը կեդրոն հրաւիրեցին՝ խմբային ներկայացումներ կատարելու համար, որոնք ծափողոյններու արժանացան:

Ապա եղբ. դամատան հրաւիրեց եղբ. Առէն Պապիկեանը, որ իր շնորհիւ յայտնի դարձած կանչը ընէ իր խումբէն երեք գայլիկներու հետ ու այս ձեւով ջահը անոնց փոխանցէ:

Յիշենք, թէ աւարտին ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի վարչութիւնը, բանակողներուն եւ անոնց ծնողներուն քաղցրեղէն հիւրասիրեց:

Բաժանումի պահը հասաւ: Բանակողները յուզումնային պահեր ապրեցան ու ցտեսութիւն ըսելով իրենց ծնողներուն՝ հաւաքուեցան իրենց խմբապետներուն շուրջ՝ նոր հրահանգներ լսելու: Ծնողները մեկնեցան բանակավայրէջն՝ հոգեպէս հանգիստ եւ ուրախ, քաջ գիտնալով թէ իրենց զաւակները ապահով ձեռքերու մէջ են եւ ՀՄԸՄի հովանիին տակ հասակ պիտի առնեն ու վաղուան առաջնորդները պիտի ըլլան եւ բարձր պահեն միութեան եւ մեր ազգին անունը:

Ք. Թողիկ Ազարիկեան

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻՉՈՆ» յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
 Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
 Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
 Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

ADVERTISE YOUR BUSINESS HERE

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ «ՀՈՐԻՉՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԵՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ

CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիօժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԸՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
 Երեքշաբթի երեկոյեան ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՈ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
 Կիրակի երեկոյեան ժամը 8:00-11:00

ՄՈՆԹՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
 Երկուշաբթի երեկոյեան ժամը 9:30-12:00
 Շաբաթ առաւօտեան ժամը՝ 7:30-9:30
 Կիրակի առաւօտեան ժամը 7:00-8:00
 «Վանայ Ձայն» 1450 AM
 Երկուշաբթի երեկոյեան ժամը 8:00-10:00

ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիօժամ CFMU 93.3 FM
 Կիրակի առաւօտեան 10:00-11:00
 cfmu.mcmaster.ca

Ուրախութեամբ կը յայտարարենք որ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի «Տոհմիկ Օր»ը այս տարի ձօնուած է՝

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ
Շաբաթ 23 Նոյեմբեր 2019ին
 Հայ Կեդրոնէն ներս

Կը խնդրուի չխաչաձեւել
 ՀՕՄԻ «Ռուբինա» Մասնաճիւղի
 Տոհմիկ Օրուայ Յանձնախումբ
 Թորոնթօ

Գանատայի Ժառանգութեան Գալուստի Գալուստի Փալլո Ռոտորիկէզ այցելեց «Հորիզոն»ի խմբագրատուն

29 Յուլիս 2019-ին, Գանատայի Ժառանգութեան եւ մշակութային բազմազանութեան նախարար Փալլո Ռոտորիկէզ այցելեց «Հորիզոն» շաբաթաթերթի Մոնթրէալի խմբագրատունը: «Հորիզոն»ի վարիչ խմբագիր Վահագն Գարագաշեան շնորհակալութիւն յայտնեց նախարարին՝ անցնող 8 տարիներուն Aid to publishers ծրագրին կողմէ շաբաթաթերթին յատկացուած նպաստին համար:

Վարիչ-խմբագիրը նաեւ նախարարին յանձնեց «Հորիզոն»ի այն բացառիկ թիւը, որուն մէջ անդիւրհանով հրատարակուած է վարչապետ Թրուտոյի Հայաստան այցելութեան ժամանակագրութիւնն ու թղթակցութիւնը՝ «Հորիզոն»ի աւագ լրագրող Տիանա Աքայի կողմէ: Միաժամանակ նախարարը իրագրեց դարձաւ, որ վարչապետ Թրուտոյի Հայոց Յեղասպանութեան յուշահամալիր պատմական այցելութիւնը յատուկ տեսանկյունով մը արխիւագրուած է «Հորիզոն»ի կողմէ:

Վարիչ խմբագիրը նախարար Ռոտորիկէզին պաշտօնական հրաւեր յանձնեց մասնակցելու յառաջիկայ Սեպտեմբերին Մոնթրէալի մէջ կայանալիք «Հորիզոն»ի 40-ամեայ յորելեանի հանդիսութեան:

Հանդիպման ներկայ էին նաեւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարագաշեան, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի գործադիր Սեւակ Պեւեան, յանձնախումբի անդամ Յարութ Դաւիթեան եւ «Հորիզոն»ի անձնակազմը:

Տեղի ունեցաւ ՀՅԴ ԳԵՄ-ի Վանգուվրի «Ա. Ծիրակեան» մասնաճիւղի տարեկան սեմինարը



26-28 Յուլիս 2019 տեղի ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութեան Վանգուվրի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի տարեկան սեմինարը, Լանկէի Գամբ Մագլին բանակավայրէն ներս: Սեմինարին ներկայ էին 20 երիտասարդներ, ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան երկու անդամներ եւ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ Վահէ Յակոբեան:

Սեմինարին ընթացքին, դասախոսութիւններ տրուեցան հետեւեալ թեմաներով. Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարաբանութիւն եւ պատմութիւն, ՀՅԴ ԳԵՄ-ի պատմութիւն եւ նպատակ եւ Հայոց Պատմութիւն 19րդ դարէն առաջ: Մասնակցողները նաեւ զրուցեցին մասնաճիւղին վիճակին եւ զայն բարելաւելու միջոցներուն մասին:

Յայտնենք, որ նշուեցաւ Լիզպոնի 5-ին գործունէութիւնը: Սեմինարը աւարտեցաւ մտերմիկ խորոյկով, որուն ընթացքին անդամները սրտի խօսք եւ տպաւորութիւններ փոխանցեցին, ինչպէս նաեւ հնչեցուցին ազգային ու յեղափոխական երգեր:

Աստրալիոյ ասորի առաջնորդ Գերշ. Տ. Էմանուէլ Եպիսկոպոս այցելած է Թորոնթոյի Ա. Աստուածածին եկեղեցին

Շաբաթ, 27 Յուլիս 2019-ին, Ա. Աստուածածին եկեղեցւոյ դահլիճէն ներս, Գերշ. Տ. Էմանուէլ Եպիսկոպոս՝ Առաջնորդ Ասորի եկեղեցւոյ, հանդիպեցաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վարդան Վրդ. Թաշճեանին հետ:



Էմանուէլ Եպիսկոպոսը շնորհակալութիւն յայտնած է Հոգշ. Հայր Սուրբին, որ լայն ու սիրալիր ոգիով զինք դիմաւորած է, նկատի առած որ ան առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Թորոնթոյի Ա. Աստուածածին Հայոց Առաքելական եկեղեցին: Նոյն ոգիով, Վարդան Վարդապետ երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնած է Էմանուէլ Եպիսկոպոսին, որ ընդառաջած է իր հրաւերին եւ ժամանակը ստեղծելով այցելած է Ա. Աստուածածին եկեղեցին:

Այցելեցէք Ա. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ նոր կայքէջը՝ www.sourphagop.net



2 day zoo trip zoo

DINOSAURS + ZOO + WATER PARK + AMUSEMENT PARK GRANBY

	1 day		2 days	
	1 NIGHT	4 PERS.*	1 NIGHT	4 PERS.*
Hôtel Castel *** Granby, full breakfast included, playground, outdoor heated pool, 2 min. from the Zoo hotelcastel.ca	\$222	\$310	\$264	\$368
Estrimont suites & spa Magog, access to hot tubs, indoor and outdoor pool, sauna, Nordic shower and relaxation yurt estrimont.ca	\$222	\$310	\$264	\$368
Hôtel Château-Bromont **** Bromont, complete breakfast, outdoor and indoor pool chateaubromont.com	\$303	\$375	\$345	\$433

Rates starting at and taxes extra. Includes admission to the Zoo de Granby, to the Amazoo Water park (according to opening days), Dinosaur park and rides park. From June 7th to September 2nd 2019. Two or more nights stays also available. *4 pers : 2 adults and 2 children aged 17 years old or less.

Visit 2days.zoodegranby.com to see all the accommodations available.

École arménienn Sourp Hagop
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան

Թափուր Պաշտօններ

2019-2020 դպրոցական տարեշրջանին համար Ա. Յակոբ Ազգային վարժարանը կարիք ունի ուսուցիչներու հետեւեալ պաշտօններուն համար:

Նախակրթարան

- Հայերէնի ուսուցիչ
- Տրանսլեյթի դասատու

Երկրորդ արան

- Հայերէնի դասատու
- Հայոց պատմութեան դասատու

Պահակներ՝

- Ձեպեգի կրթութեան նախարարութեան կողմէ դասաւանդման արտօնագիր կամ դասաւանդելու պաշտօնական իրաւագիր
- Ոչ հայերէն նիւթերու դասաւանդման համար, նաեւ՝ CEFRANCO քննութեան յաջողութեան վկայագիր:

Enseignantes et enseignants recherchés
Pour un milieu d'exception

L'École arménienne Sourp Hagop cherche à pourvoir quelques postes d'enseignantes ou d'enseignants au primaire et au secondaire.

Au primaire, l'École recherche des titulaires au 1^{er} cycle et au 3^e cycle et des enseignants de langue arménienne pour le 3^e cycle du primaire.

Au secondaire, l'École recherche des enseignantes et enseignants de langue et d'histoire arméniennes pour les 1^{er} et 2^e cycles du secondaire.

Certains de ces postes sont permanents; d'autres sont à pourvoir en remplacement temporaire pour l'année 2019-2020.

Qualifications requises

- Autorisation légale d'enseigner ou en voie d'obtention
- Réussite au Test de rendement en français écrit pour l'enseignement (TECFÉE).

Կրկնք ձեր դիմումը ներկայացնել միշտէ 5 Օգոստոս 2019 կապ հաստատելով տնօրէնութեան հետ lory.abrakian@ecolesourphagop.com հասցէին:

Toute personne intéressée à poser sa candidature doit faire parvenir son curriculum vitae par courriel au plus tard le 5 août 2019, à l'attention de Madame Lory Abrakian, directrice générale, à l'adresse suivante : lory.abrakian@ecolesourphagop.com

3406, RUE NADOUR, MONTRÉAL (QUÉBEC) H4I 1P5 • (514) 332-1373
www.ecolesourphagop.com • Courriel: direction@ecolesourphagop.com

Արցախեան Հիմնահարցը՝ Առանցքային

Հայաստանի Հանրապետության եւ Արցախի իշխանութիւններին միջեւ առկայ են լարուած յարաբերութիւններ: Ինչքան էլ երկու կողմից բացատրութիւններ տրուեն, հաւաստիքներ հնչեցուեն ընկերային ցանցերում, այս կամ այն ճամբարին պատկանող զանգուածային լրատուական միջոցներում առկայ են մեղադրանքների եւ հակասութիւնները բացայայտող երկկողմանի հրաձգութիւններ: Լարուածութիւնը սկսուել է դեռեւս 2018 թուականի Դեկտեմբերին տեղի ունեցած ՀՀ ԱԺ ընտրական քարոզարշաւի ժամանակ, երբ պատգամաւորական թեկնածու Սասուն Միքայէլեանը 2018 թուականի Ապրիլի իշխանափոխութիւնը առաւել արժեւորեց, քան՝ արցախեան յաղթանակը:

Բանն այն է, որ վերջին 20 տարիներին, մինչեւ 2018 թուականի Ապրիլին տեղի ունեցած իշխանափոխութիւնը Հայաստանի թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քաղաքականութեան դաշտում առանցքային տեղ է գրաւել արցախեան հիմնահարցը: Մինչեւ իսկ Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան աւարտը պայմանաւորուել է արցախեան հիմնահարցի վերաբերեալ իշխող ընտրանուներում գոյութիւն ունեցող հակասութիւնների պատճառով: Չենք կարող չնկատել, որ արցախեան հիմնա-

հարցի կարեւորութիւնն օգտագործուել է իշխանութեան դէմ ուղղուած արդարացի պահանջներին դիմակայելու համար, որն իր բացասական ազդեցութիւնն է ունեցել հասարակութեան որոշ շերտերի մէջ արցախեան հարցի շուրջ զգայունութեան ձեւաւորման հարցում:

Այսուհանդերձ, արցախեան հիմնահարցի առանցքայնութիւնը դարձել է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի գաղափարական լիցք, որը համայն հայութեան մօտ կարեւոր նշանակութիւն ունի՝ թէ՛ սփիւռքեան մակարդակում հայապահպանութեան եւ թէ՛ ներհայաստանեան մակարդակում ինքնապաշտպանութեան եւ ձեռք բերածի պահպանման ու զարգացման ուղու մէջ: Հէնց այդտեղից է իմաստաւորում Դաշնակցութեան ռազմավարական մօտեցումները խտացնող, ներկայ օրերում մեզ անհրաժեշտ՝ «Ջարգանալ՝ չզիջելով» կարգախօսի ուղերձը:

Այսօր Հայաստանի տարածքը, շնորհիւ ազատագրական պայքարում ձեռք բերած յաջողութիւնների, ԱԶ հազար քառակուսի քիլոմետր է, որի պահպանումն ու բարգաւաճումը պէտք է լինի հայկական պետական համակարգի կարեւորագոյն առաքելութիւնը: Ելնելով վերոնշխարից՝ Արցախի պետական համա-

կարգի առանցքային հիմնահարցը նաեւ անվտանգութեան տարր պէտք է հանդիսանայ Արցախի տարածքի զարգացումն ու 12 հազար քառակուսի քիլոմետր կազմող անկախ երկրի բարգաւաճումը: Այս կարեւորագոյն ուղին է, որի հիման վրայ պէտք է ձեւաւորուի համազգային զարգացման հեռանկարը:

Վերադառնալով Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնների միջեւ առկայ լարուածութեանը՝ ՀՅ Դաշնակցութիւնը համոզուած է, որ այս հարցը կը լուծուի ԱՀ եւ ՀՀ միջեւ ռազմավարական դաշինքի կնքման միջոցով: Այսպիսով, կը կանխարգելուեն կամայական մօտեցումները, եւ պարզ ու յստակ կը դառնայ իւրաքանչիւր կողմի սահմանները եւ պարտաւորութիւնները միւսի նկատմամբ: Բնական զարգացում ապահովելու համար պարտաւոր ենք կանխարգելել իւրաքանչիւր ճնշում: Դա կարող է լինել թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին դաշտից:

Քաղաքական վերադասաւորումների լոյսի ներքոյ վերը նշուած հարցերը այն հիմնադրոյթներն են, որոնց հիման վրայ իւրաքանչիւր քաղաքական ուժ պէտք է ձեւաւորի իր տեսլականը եւ շունչ ու հոգի տայ Արցախի քաղաքացու պատուէրին: **«ԱՊՍՌԱԺ»Ի ԽՄԱՍԳՐԱԿԱՆ**

Քաղաքական Ուժերը Պէտք է Զերծ Մնան Կուսակցական Նեղ Ծախերով Առաջնորդուելուց

Հարցազրոյց ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի Անդրապետի Դաւիթ Իշխանեանի հետ

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցչի պաշտօնում վերընտրուած Դաւիթ Իշխանեանի հետ «Ապառաժ»-ը գրուցել է Շրջանային ժողովի արդիւնքների, Դաշնակցութիւն-իշխանութիւն փոխարարքերու քիւնցների, ներքաղաքական իրավիճակի եւ 2020-ին կայանալիք համապետական ընտրութիւններին Դաշնակցութեան մասնակցութեան հարցերի շուրջ:

ՀԱՐՑՈՒՄ.– Յուլիսի 6–7-ը կայացել է ՀՅԴ Արցախի կառոյցի Շրջանային ժողովը: Ժողովն ինչպէ՞ս է գնահատել շրջանաւարտ Կենտրոնական կոմիտէի գործունէութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.– Դաշնակցութեան ժողովներն ընդհանրապէս հետաքրքիր միջոցառում են ընթանում: Այդ առումով, առաւել հետաքրքրական է լինում քննադատութիւնը եւ բացթողումների ուղղութեամբ ծաւալուած քննարկումները, յատկապէս՝ քաղաքական երեւոյթների շուրջ: ՀՅԴ Արցախի կառոյցի բարձրագոյն ժողովն անմասն չէր այն ընդհանուր քննարկումներից, գնահատականներից ու քննադատութիւններից, որոնք իւրայայտուել են Դաշնակցութեանը:

Անցած մէկուկէս տարուայ գործունէութեան ընթացքում ՀՅԴ Արցախի կառոյցի պատասխանատու մարմինը՝ Կենտրոնական կոմիտէն, բաւականին դժուար ժամանակահատուածում է գործել, եւ այդ դժուարութիւնները բխում էին ստեղծուած այն կացութիւնից եւ մարտահրաւէրներից, որոնց յաղթահարման ուղղութեամբ լուրջ ճիգեր է գործադրել Դաշնակցութեան Արցախի պատասխանատու մարմինը:

Ընդհանուր առմամբ՝ բաւարարուած եմ ժողովի ընթացքում հնչած գնահատականներից եւ քննադատութիւններից, որովհետեւ հէնց այդ քննարկումների արդիւնքում է ծնուել առաջիկայ երկամեակի համար առաջարկների, որոշումների եւ ընդունուած բանաձեւերի փաթեթը, որը եւ հանդիսանալու է նորընտիր Կենտրոնական կոմիտէի կողմնորոշիչ քաղաքական օրակարգ եւ ուղեգիծ ձեւաւորելու համար:

Հ.– Ինչպէ՞ս որակուեցին անցած ժամանակաշրջանում Դաշնակցութիւն-իշխանութիւն փոխարարքերու քիւնցները:

Պ.– Դաշնակցութիւն-իշխանութիւն փոխարարքերութիւնների հարցը օրակարգի առանցքային կէտերից էր: Պէտք է արձանագրենք, որ 2007 թուականին Դաշնակցութիւն-իշխանութիւն յարաբերութիւնները առ այսօր էական փոփոխութիւններ չեն գրանցուել: Առ այդ՝ այս կէտի շուրջ քննարկումները ծաւալուել են ոչ թէ ԿԿ-ի անցած երկու տարիների, այլ վերջին 10–12 տարիներին կառոյցի որդեգրած քաղաքական ուղեգիծի շուրջ:

Պէտք է ասել, որ Դաշնակցութիւն-իշխանութիւն փոխարարքերութիւնները որոշ առումներով չեն բաւարարել կառոյցի զանազան շրջանակներին: Ժողովին մասնակից պատուիրակները ներկայացրել են այդ մօտեցումներն ու լուրջ քննադատութեան արժանացրել

յատկապէս Դաշնակցութեան ներկայացուցիչների ներկայութիւնը իշխանական օրակներում եւ, ընդհանրապէս, Դաշնակցութեան ներկայութիւնը կառավարման ոլորտում: Սակայն քիչ չէին նաեւ Դաշնակցութիւն-իշխանութիւն փոխարարքերութիւններում մատնանշուած յաջողութիւնները: Համահայկական մակարդակով Դաշնակցութեան կառույցների, ՀՅԴ Արցախի կառոյցի եւ Արցախի իշխանութիւնների համատեղ ջանքերով Արցախի արտաքին քաղաքականութեան ոլորտում գրանցուել են ակնառու յաջողութիւններ: Վերաքննկեցման ոլորտում եւս Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառույցների ջանքերով եւ ՀՅԴ Արցախի ԿԿ-ի միջնորդութեամբ իրականացուած են լայնածաւալ ծրագրեր: Արցախի իշխանութիւնների եւ Դաշնակցութեան դիրքորոշումները համահայկական խնդիրների վերաբերեալ համահունչ են: Այդ առումով, ինչպէս միշտ ասուել է, Արցախն ու Դաշնակցութիւնը ռազմավարական դաշնակիցներ են:

Հ.– Ժողովի կողմից հրապարակած յայտարարութեան մէջ անդրադարձ է եղել նաեւ Արցախում տիրող ներքաղաքական իրավիճակին: Ի՞նչ մտահոգիչ երեւոյթներ է նկատում Դաշնակցութիւնը:

Պ.– Դաշնակցութեան համար միշտ էլ գերակայ է եղել պետական եւ ազգային շահը: Մենք միշտ առաջնորդուել ենք այդ սկզբունքով, գործել ենք ազգային եւ պետական շահի չխաթարման ուղղութեամբ՝ անկախ այն բանից, որ այդ պահին վերելք կամ անկում կ'ունենայ կուսակցութեան վարկանիշը: Այդ իսկ առումով՝ Դաշնակցութիւնը կարեւորում է ներքաղաքական կայուն եւ համերաշխ միջոցառում պահպանումը, ինչն արձանագրուել է նաեւ Շրջանային ժողովում եւ արտացոլուել ժողովի կողմից հրապարակուած յայտարարութեան մէջ: Պէտք է արձանագրել, որ վերջին մէկ տարուայ ընթացքում տարբեր քաղաքական խմբաւորումների, ինչպէս նաեւ քաղաքական անհատ գործիչների մօտ նկատելի է կայունութիւնը խաթարող գործունէութեան ծաւալում, որը չի բխում մեր ընդհանուր ազգային եւ պետական շահերից:

Կուսակցական շինարարութեան անուան տակ քաղաքական գործիչներ եւ որոշ ուժեր ժամանակից շուտ սկսել են 2020 թուականին կայանալիք համապետական ընտրութիւնների նախապատրաստական աշխատանքները եւ քարոզարշաւը: Մենք անցեալում առիթ ենք ունեցել յայտարարելու, որ Արցախի Հանրապետութիւնում վաղօրօք մեկնարկած քաղաքական զարգացումներն իրենց մէջ պարունակում են վտանգաւոր երեւոյթներ, որոնք կարող են խաթարել եւ լուրջ հարուած հասցնել մեր ընդհանուր միասնութեանը:

Մասնաւորապէս ուղում եմ անդրադառնալ Սամուէլ Բաբայանի եւ նրա խմբակիցների կողմից ծաւալած խարուսիկ քաղաքական գործընթացներին, որոնք սահմանադրական բարեփոխումների նախաձեռնութեան, օրէնսդրական առաջարկների ներկայացման եւ հանրաքուէի անցկացման միջոցով միտում ունեն խաթարելու մեր ներքին քաղաքական միասնութիւնը: Այդ

գործընթացը խաթարում է նաեւ Հայաստան-Արցախ միասնութիւնը:

Սամուէլ Բաբայանի ու նրա խմբակիցների կողմից այդ վտանգաւոր մտադրութիւնները ներկայացուած են որպէս Արցախը Հայաստանին միաւորելու, այսպէս ասած՝ նոր մօտեցում, սակայն խորքում նրանց կողմից որդեգրած գործընթացը լուրջ վտանգներ է պարունակում՝ անկախ պետականութեան հաստատման եւ մայր հայրենիքին՝ Հայաստանին վերամիաւորուելուն ուղղուած ռազմավարութեանն ու մարտավարութեանը:

Այստեղ նկատելի է նաեւ քաղաքական տարբեր բանասարկութիւններով ժողովրդի զանազան շրջանակներին կեղծ օրակարգ առաջարկելու, այլ ոչ թէ ճշմարիտ մօտեցումներով հանրութեանը համապատասխան տեսակէտների եւ քաղաքական մօտեցումների շուրջ համախմբելու իրողութիւնը:

Այդ ամէնին մենք ուշի-ուշով հետեւում ենք, եւ այդ հարցերին անդրադարձել ենք նաեւ մեր բարձրագոյն ժողովում՝ ընդգծելով, որ հիմնական հարցերի շուրջ միասնութեան ու ներքին համախոհութեան միջոցառում առկայութիւնը մեզ համար գերակայ է: Այդ առումով, Դաշնակցութեան Արցախի կառույցն իր բոլոր ջանքերն ուղղելու է միասնական օրակարգի ձեւաւորմանը եւ ներքաղաքական դաշտում կայունութեան ապահովմանը:

Հ.– Առաջիկայում տեղի են ունենալու տեղական ինքնակառավարման մարմինների, նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ: Ինչպիսի՞նք է ինքնուրու Դաշնակցութեան մասնակցութիւնն այդ ընտրութիւններին:

Պ.– Առաջիկայ ՏԻՄ ընտրութիւնները մենք համարում ենք 2020 թուականին կայանալիք համապետական ընտրութիւնների առաջին փուլ, նախերգանք: Մենք այն համոզմանն ենք, որ քաղաքական ուժերը պէտք է գերծ մնան կուսակցական նեղ շահերով առաջնորդուելուց: Քաղաքական ուժերը պէտք է ունենան այն միտումը, որ գալիք ընտրութիւններից յետոյ Արցախի Հանրապետութիւնն աւելի ուժեղացած եւ ամրապնդուած քաղաքական համակարգով է օժտուած լինելու: Իսկ ժողովուրդը պէտք է համոզուած լինի, որ իւրաքանչիւր ընտրութեան արդիւնքում մենք աւելի հեշտութեամբ եւ պատրաստակամութեամբ կը կարողանանք յաղթահարել մեր երկրի առջեւ ծառայած մարտահրաւէրները: Թէ՛ ՏԻՄ, թէ՛ նախագահական եւ թէ՛ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում պէտք է շահի պետութիւնը, պէտք է շահի երկիրը եւ ժողովուրդը: Դաշնակցութիւնն ամէն պարագայում մասնակցելու է իւրաքանչիւր համապետական ընտրութիւնների. այդ ուղղութեամբ թող փարատուեն բոլոր կասկածներն ու երկմտութիւնները: Մենք՝ որպէս Արցախի ներքաղաքական կեանքում ազդեցիկ եւ գործունեայ քաղաքական ուժ, մեր ասելիքն ունենք: Այդ հարցում թող ոչ ոք կասկածներ չունենայ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐՅԵՑ ԼՈՒՍԻՆԷ ԹԵՒՈՍԵԱՆ



ՌԻՍԱԿՈՐԻԶ



ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Բ. ՏԱՐԻ, ԹԻՄ 9, Օգոստոս 2019

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՅՈՅՍՈՎ ԼԵՑՈՒԻԼ



Պօղոս առաքեալ հռոմեացիներուն նամակին յատկապէս 15րդ գլխուն 13-րդ համարին մէջ, իր աղօթքներուն և մաղթանքներուն մէջ կ'ըսէ.- **«Յոյս պարզևող Աստուածը թող ձեզ ամբողջական ուրախութեամբ և խաղաղութեամբ լեցնէ իր հանդէպ ձեր ունեցած հաւատքով, որպէսզի Սուրբ Հոգիի զօրութեամբ յոյսով առատանաք»:**

Առաքեալը իր խօսքին մէջ շեշտը կը դնէ յոյսին վրայ: Ուրիշ տեղ մը, այս անգամ կորնթացիներուն ուղղած իր առաջին նամակին մէջ, կ'ըսէ.- **«Կարևոր միակ բաներն են՝ հաւատքը, յոյսը և սէրը»:** Այս աշխարհին մէջ կրնայ ամէն ինչ կորսուիլ բացի հաւատքէն,

յոյսէն և սէրէն: Պէտք է հաւատանք, որ Աստուծոյ սէրէն է որ կը բխի մեր յոյսը:

Առաջին հերթին, եկէք հարց տանք՝ **ի՞նչ է յոյսը և ի՞նչն է համար յոյս կը տածենք:**

Յոյս կը տածենք հիմնական հինգ ճշմարտութիւններու.

Ա) **Յաւերենական կեանքի յոյսը**, ինչպէս որ կը կարդանք Պօղոս առաքեալի, իր աշակերտին՝ Տիտոսին ուղղած նամակին մէջ.- **«...Ժառանգելու յաւիտենական կեանքը, որուն յոյսը ունինք» (Տիտ 3.7):**

Բ) **Փրկութեան յոյսը**, որուն համար Քրիստոս աշխարհ եկաւ՝ իրագործելու այդ խոստումը: Դարձեալ Պօղոս առաքեալ Թեսաղոնիկէի եկեղեցիներուն ուղղած իր առաջին նամակին մէջ կը թելադրէ՝ ըսելով.- **«Պատրաստ ըլլանք՝ հաւատքի ու սիրոյ զրահը հագած և փրկութեան յոյսի սաղաւարտը մեր գլխուն դրած... ժառանգելու Անոր փրկութիւնը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով» (Ա. Թ-ս 5.8-9):**

Գ) **Մեռելներու յարութեան յոյսը**, այս անգամ առաքեալներու գործերուն 23րդ գլխուն 6րդ համարին մէջ կը լսենք դարձեալ Պօղոս առաքեալի բացականչութիւնը ուղղուած սաղուկեցիներուն և փարիսեցիներուն.- **«Եթէ ես հիմա կը դատուիմ, ապա նաև անոր համար, որ մեռելներու յարութեան յոյսը ունիմ» (Գրծ 23.6):**

Դ) **Աւերարանի քարոզութեան յոյսը**, երբ Առաքեալը կողոսացիներուն ուղղած իր նամակին մէջ կը թելադրէ.- **«Յարատևել հաւատքի մէջ՝ անխախտ պահելու այն յոյսը, որ ունեցաք Աւետարանի քարոզութեամբ» (Կղ 1.23):**

Ե) **Ասարածային կանչին ու հրաւերին ակնասարես ըլլալու յոյսը**.- **«Ճոխ ու փառաւոր այն խոստումին, որ պիտի ժառանգեն Անոր ընտրեալները» (տէն Եփ 1.18):**

Գետնայէ ետք թէ՛ ի՞նչ է յոյսը և ի՞նչ բանի համար յոյս կը տածենք, այժմ հարց տանք՝ ի՞նչ կրնայ յոյս ունենալ: Նախ, յոյս կրնան ունենալ անոնք՝ որոնք **Քրիստոսի մէջ են**, և **Քրիստոսը իրենց մէջ կ'ապրեցնեն**: Քրիստոսի միացած միայն կրնանք մաս կազմել Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին, որովհետև Անոր միջոցով, Անոր զոհագործութեամբ մենք հաշտուեցանք Աստուծոյ հետ և Անոր միջոցով կրնանք ապրիլ **ՅՈՅՍՈՎ**:

Երկրորդ, յոյս կրնան ունենալ **անոնք՝ որոնց մէջ է Քրիստոս**, որովհետև՝ **«Անգամ մը, որ Քրիստոսով մկրտուեցաք՝ այլևս Քրիստոսն է, որ կ'ապրի ձեր մէջ» (Գղ 3.27):** Երբ Քրիստոս մեր մէջ ապրի, այն ժամանակ կրնանք **ՅՈՅՍՈՎ ԼԵՑՈՒԻԼ**:

Բարգէն Արքեպիսկոպոս Չարեան



Յիսուս աշխարհ գալով իր երկրաւոր առաքելութեան առաջին իսկ օրէն սկսաւ **«Արքայութեան Աւետարանը»** ուսուցանել և քարոզել (Մտ 4.23, 9.35, Դկ 8.1, 9.11), նոյնը քարոզել պատուիրեց իր 12 առաքեալներուն և 72 աշակերտներուն (Մտ 10.7, Դկ 9.2), և մինչև վերջ ալ շեշտեց, թէ՛ **«Արքայութեան Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ աշխարհի մէջ՝ իբրև վկայութիւն բոլոր ժողովուրդներուն. և ապա պիտի գայ վախճանը» (Մտ 24.14)**, ուստի ամէն անգամ որ մենք ըսենք **«Թող գայ քու արքայութիւնդ»**, պէտք է մտածենք ու գիտակցինք մեր կատարելիք պարտականութեան և պարտաւորութեան մասին, որ է՝ անվերջ աշխատիլ ու պայքարիլ ի խնդիր Աստուծոյ արքայութեան հաստատման:

Ահա ասոր համար է որ Քրիստոս մեզի կը թելադրէ նախ Աստուծոյ արքայութիւնը և անոր արդարութիւնը խնդրել, իսկ մնացեալ բաները ատելով Աստուած պիտի տայ մեզի (Մտ 6.33, Դկ 12.31):

Ուստի, պէտք է ցանկալ ու աղօթել, որպէսզի մեր երկնաւոր Հայրը մեզի արժանի ընէ իր արքայութեան, որպէսզի չըլլայ որ Ա՛ն գայ, բայց՝ ոչ թէ մեզի համար: Որովհետև ոմանց համար այդ գալուստը պիտի նշանակէ՛ **«Եկէք, Հօրս կողմէ օրհնեալներ, ժառանգեցէք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած արքայութիւնը»**, իսկ ոմանք ալ պիտի լսեն սահմուկեցուցիչ սա խօսքերը, թէ՛ **«Անիծեալներ, հեռացէք ինձմէ, գացէք յաւիտենական կրակին մէջ, որ Սատանային և անոր հրեշտակներուն համար պատրաստուած է»:** Անոր համար աղօթենք, որ Տէրը մեզ բարիացնէ. այդ ժամանակ մեզի համար կու գայ Անոր արքայութիւնը»:

Եթէ կ'ուզենք մուտք գործել արքայութիւն և ժառանգել գայն, ուստի և պէտք է հրաժարինք փառքէ, պատիւէ ու աշխարհիկ հոգերէ և զբաղմունքներէ՝ որքան ալ քաղցր թուին ըլլալ անոնք. պէտք է ըլլանք ներողամիտ մեր նմանին հանդէպ, ողորմած, բարեմիտ, արդարութեան ու խաղաղութեան հաստատման համար աշխատող, Աստուծոյ կամքը կատարող:

Խմբագրական



ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ



Վերափոխումը Ս. Կոյս Մարիամ Աստուածածնայ երկրէն երկինք փոխադրուելու յիշատակն է: Վերափոխումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ հինգ տաղաւար տօներէն չորրորդն է, որ կը հանդիպի Օգոստոս 15-ի մերձակայ Կիրակին: Այս տօնը Ս. Աստուածածնի նուիրում տօներէն գլխաւորն է ու հնագոյնը:

Համաձայն եկեղեցական աղբիւրներու, մեր Տիրոջ և Փրկչին Յիսուս Քրիստոսի խաչելութենէն ետք, Ս. Կոյս Աստուածածին 15 տարի ապրեցաւ Երուսաղէմի մէջ, Յովհաննէս Առաքելի խնամքի տակ. անոր երեցաւ Տիրոջ հրեշտակը և հաղորդեց մարմնով երկինք փոխադրուելու ատիկաը: Այդ գիշեր, Տիրամայրը ասանդեց իր հոգին. առաքելները անոր մարմինը մեծ հանդիսութեամբ ամփոփեցին Գերսենմանիի ձորակին մէջ: Յուդարկաւորութեան ներկայ չէր Ս. Բարթողիմէոս Առաքել: Աւելի ուշ հասնելով, Ս. Բարթողիմէոս խնդրեց բանալ շիրիմը, որպէսզի վերջին անգամ տեսնէ Տիրամայրը: Երբ բացին գերեզմանը, զայն պարապ գտան և հասկցան, որ ան փոխադրուած է երկինք՝ իր Միածին Որդիին քով:

Աւանդութեան համաձայն, Ս. Բարթողիմէոս առաքելին տրուեցաւ Աստուածամօր կենդանապատկերը, զոր Ս. Կոյսը յետ օրհնութեան յանձնած էր Յովհաննէս Աւետարանիչին: Հայկական գրոյցներու համաձայն, Ս. Բարթողիմէոս Առաքել զայն Հայաստան բերաւ և դրաւ Անձնացեաց գաւառի Դարբնաց քար կոչուած տեղը:

Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին կը կատարուի խաղողօրհնէք, որուն ընթացքին կը կարդացուի Ս. Ներսէս Շնորհալիի աղօթքը և կը խնդրուի Աստուծոյ օրհնութիւնը: Խաղողը իբրև տարուան առաջին բերք՝ կը խորհրդանշէ ամբողջ տարուան բերքը:

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ՕՐՀ ԴՁ

Այսօր սուրբերը՝ երանելի առաքելներն ու սուրբ կոյսերը՝ միասին հաւաքուած՝ լուսաւոր զգեստներով պայծառացած՝ իրենց լապտերները կը վառէին և միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ ես դուն՝ կիներուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր Սուրբ Կոյսը գերեզմանին առջև դնելով կը սպասէին և կ'ակնկալէին Տիրոջ անձամբ հոն ըլլալը. տեսան որ Արարիչը վերէն բազում հրեշտակներով կու գար. և անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ ես դուն՝ կիներուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր տեսան Սուրբ Կոյսին օդին մէջ թռչիլը և ամպեղէն կառքով երկինք համբարնալը և երկնային խորաններու մէջ մտնելը իմաստուն կոյսերուն հետ. և անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ ես դուն՝ կիներուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր բազմաչեայ քերովբէներուն և վեցթևեան սերովբէներուն հետ եօթնաստեղեան խորանները մտնելով տեսար զանազան աթոռներ, զոր Տէրը քեզի համար պատրաստած է. մենք ալ կ'երգենք ըսելով՝ օրհնեալ ես դուն՝ կիներու մէջ ամէնօրհնեալ:

Այսօր Աստուած Բանը, նախամայրը մեղքէն ազատող Կոյս Մայրը երկինք փոխադրեց, աստուածային խորաններուն անպատմելի կեանքին մէջ դասելով զայն. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:

Այսօր Տիրամայր Սրբուհի Կոյսը, հրեշտակներու դասերուն միջոցաւ ասանդեց իր սուրբ հոգին, գերարփիի նման փայլելով և ահեղ հրեղէններու դասերուն նմանելով. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:

Այսօր անմարմին հրեշտակները Աստուածամայր Կոյսին մաքուր մարմինը վեր բարձրացնելով ամփոփեցին տեսանելի զգայութիւններէն գերակայ եղողներուն տեղը՝ անճառելիներուն հաղորդակից ընելով զայն. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:

Հողեղէններս, հրեղէններուն հետ, այսօր յուսալից խնդրութեամբ և յաւերժական ձայնով կ'օրհնաբանենք քեզ, տօնախմբելով Կոյսին՝ քու մօրդ և աղախինիդ յիշատակը. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնեղներ կ'երգէ քեզի:





ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

«ԵՐԱՆԻ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ

ԱՌԱՆՑ ԶԻՍ ՏԵՄՆԵԼՈՒ ԿԸ ՀԱԻԱՏԱՆ»



Ա լ ե տ ա ր ա ն ա կ ա ն քարոզության էական խորհուրդներէն մէկն է՝ «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս եւ հոն եմ՝ անոնց միջև» (Մտ 18.19-20):

Մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս իր բաժանման պահուն աշակերտներուն վերջին խոստում մը տուաւ, ըսելով. «Միշտ ձեզի

հետ պիտի ըլլամ մինչև աշխարհի վախճանը» (Մտ 28.20):

Յիսուսի խաչելութեան և թաղման ի տես, առաքելները յուսախար վիճակի մատնուած էին: Մանաւանդ հրեաներու հալածանքներուն ահն ու սարսափը պատճառ դարձած էր որ անոնք ապաստանէին վերնատան մէջ: Եւ ահա, Յարութենէն ետք, Յիսուս իր խոստումը յարգելով զանազան առիթներով երևցաւ առաքելներուն և հաւատացեալներուն, նպատակ ունենանով փաստել. -

Ա- Իր մարմնացեալ Աստուած ըլլալը, որ եկած էր մեղաւոր մարդը փրկելու:

Բ- Յարութենէ ետք նոյն Քրիստոսն ու Փրկիչը ըլլալը «Զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան» (ժամագիրք, Հաւատոյ Հանգանակ):

Գ- Իր խոստումին հաւատարիմ ըլլալը, որ ըսած էր. - «Ես ձեզի հետ եմ» (հմմ.):

Դէպքը կը սկսի Կիրակի օր, երբ Յիսուս վերնատան մէջ կը յայտնուի իր առաքելներուն: Այդ օր թովմաս կը բացակայէր: Վերադարձին, միւս առաքելները կ'աւետէն ըսելով, թէ «Տէրը երևցաւ...»: Թովմաս կը պատասխանէ. - «Մինչև որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը և ձեռքերս չդպցնեմ անոր կողին՝ չեմ հաւատար» (Յհ.20, 25):

Յովհաննէս Աւետարանիչ այս դէպքին շարունակութիւնը կը պատմէ, որ ութ օրեր ետք Յիսուս կրկին անգամ յայտնուեցաւ առաքելներուն, այս անգամ թովմասն ալ հոն էր: Հանդիպման ամառտին, Յիսուս ըսաւ թովմասին. - «Մատդ բեր՝ հոս դիր և տես ձեռքերս. բեր ձեռքերդ և դպցուր կողիս և անհաւատ մի ըլլար, այլ հաւատացեալ: Թովմաս բացագանչեց. - «Տէրս և Աստուածս»: Յիսուս ըսաւ անոր. - «Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չ'է. երանի՛ անոնց՝ որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան» (Յհ.20, 26- 29):

«ԵՐԱՆԻ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ ԱՌԱՆՑ ԶԻՍ ՏԵՄՆԵԼՈՒ ԿԸ ՀԱԻԱՏԱՆ»

Այս մեծ երանութիւնը բոլոր հաւատացեալ քրիստոնէաներուն համար է, որոնք Յիսուսը տեսնելու և շօշափելու առիթը չունեցան, չէին կրնար ունենալ, բայց և այնպէս՝ Յիսուսի ավետարանին զօրութիւնը, կատարած հրաշքներու հզօրութիւնը, կրօնքին վեհութիւնը զգալով, հաւատացած, աշակերտած և հետևած են Անոր: Ուստի, այս երանութիւնը կը վերաբերի մեզի՝ բոլորիս:

Տաթև Աւ. Քհնյ. Միքայէլեան


ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

... ահա ես նոր երկինք և նոր երկիր պիտի ստեղծեմ...: Ես.65.17



Տէր, քանզի հպարտ երկնաբերս: Թող հաւասարիմ գետնին ու Քեզի յանձնուիմ ամբողջութեամբ: Թող երեսս դառնայ դէպի հողը, Որ խոնարհութեան մայրը ըլլալով կը գրկէ մեզ, Թոյլ կու տայ որ կանգնիմք վրան: Երբ յարմար գտնես, և երբ Խոնարհութիւնը իմ անձիս միակ դէմքը դառնայ, Շինէ ինձմով այն շէնքը որ միայն Քուկդ է, Անիկա որ Քու ծառայութեանդ յանձնուած է: Թող խոնարհելու առիթ չկորսնցնեմ, Այլ եկածը անդադար փոխանցեմ և Անանձնականօրէն նուիրեմ Քեզի: Համբերութիւնս կարճ է, Տէր: Շուտով կը բեկուիմ: Երկարէ շունչս որպէս Քու շունչդ: Թող մեղքերս և տկարութիւններս Առիթ ըլլան Քեզի վերադառնալու: Չփախցնեմ առիթները: Թող չարը չըլլայ զիս բեկանողը... Այլ՝ Դուն: Որովհետև զիս բեկանելդ Դէպի միութիւն կ'առաջնորդէ: Միութիւն հետդ: Դուն կը քակես զիս, որպէսզի նորը շինես, Քուկդ կերտես մէջս: Այն որ Քեզի կը պատկանի: Այն որ Քեզմով կ'աճի ու կը սնանի: Այն որ սահման և բաժանում չի ճանչնար: Այն որ մէկ է բոլորին հետ: Այն որ միութեան մէջ է Ամբողջին հետ:

Կարօ Սրկ. Նոյնուտեան



«ՇՆՈՐՀՔԴ ՄԵԶՄԷ ԱՆՊԱԿԱՍ ԸՐԷ, ՏԷ՛Ր ԱՍՏՈՒԱԾ: ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ ԴՈ՛ՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԷ. ՄԵՐ ԲԱՐԻ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԴՈ՛ՒՆ ՅԱՋՈՂԷ՛» (ՍԱՂՄՈՍ. 90:17):

«ԻՆՉ ԳՈՐԾ ԱԼ ԸՆԷՔ՝ ՄՐՏԱՆՑ ԸՐԷՔ, ԱՅՆՊԷՍ՝ ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ԸՆԷՔ ՏԻՐՈՋ ԵՒ ՈՉ՝ ՄԱՐԴՈՑ: ՈՐՈՎՀԵՏԵՒ ԳԻՏՅԷՔ, ԹԷ ՏԻՐՈՋՄԷ Է ՈՐ ՊԻՏԻ ԱՌՆԷՔ ՁԵՐ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ» (ԿՈՂՈՍԱՑԻՍ 3:23-24):



ՈՒՍԱԴՈՐԻՉ

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻԻ ԽՐԱՏՆԵՐԸ ՄԻՐՈՅ ՄԱՍԻՆ



- Ան, որ կը սիրէ բարեպաշտը, սիրոյ արձան կը կանգնեցնէ Աստուծոյ [համար] և անհաշտ թշնամութիւն [կ'արտայայտէ] սաստանային նկատմամբ:
- Դուն քեզի համար բնատրութիւն դարձուր սերն ու երկիւղը, որպէսզի խաբէութեամբ չտանջուիս:
- Հնազանդէ՛ սիրով, աղօթէ՛ յոյսով, աշխատէ՛ հաւատքով, և [այդպիսով] կը պայծարանաս երկնային հարսանիքին մէջ:
- Մի՛ սիրեր ուտելիքներու և ըմպելիքներու յագուրդը, այլապէս մարմինդ կը դարձնես պոռնկութեան քաղաք և սաստանայի ամրոց:
- Խոնարհութեամբ, սիրով, յոյսով հնազանդիլը և գիտակցաբար չարչարուիլը կատարելութիւն է:
- Եթէ քեզ սիրեն, գոհացիր Աստուծմէ, իսկ եթէ չսիրեն, մի՛ տրտնջար, և ուրիշներն ալ մի՛ տրտմեցներ, այլ դուն քեզ նեղէ քիչ մը լոռութեամբ, որովհետև ան որ կը պատերազմի, համբերութեան կարիքը պէտք է զգայ:
- Տգէտ և անշրջահայեաց առաջնորդը՝ բուժելու ատեն կը խոցէ, ուղղելու ատեն կը խորտակէ, սիրոյ ատեն ատելութիւն կը սերմանէ:

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Երկու մարդիկ կ'աղօթէին: Առազինը կ'ըսէր.- «Ես բարի մարդ եմ», իսկ երկրորդը՝ «ՊՎ Մէյր, ներէ ինձի, որովհետեւ չարութիւն ըրած եմ»: Պր մարդուն աղօթքը Աստուծոյ կողմէ անելի ընդունելի պիտի ըլլայ:

Կարդանք այս պարսմութիւնը **Պուկաս 18,9-14** Բանարներուն մէջ, եւ երկու նկարները բաղդարելով **10** փարբերութիւններ գրենք:



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada

514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca

Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան
3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

ANCC representatives meet Minister Pablo Rodriguez



MONTREAL—On July 29, a delegation representing the Armenian National Committee of Canada met with Canada's Minister of Heritage and Multiculturalism Pablo Rodriguez.

During the hour-long meeting, ideas were exchanged and productive discussions took place related to ANCC's upcoming nationwide initiatives, relations with other communities, the bilateral relations between Canada and Armenia and other top ANCC policy priorities.

The Minister spoke highly of the important contributions of the Armenian-Canadian

community and provided extensive information about the Ministry's ongoing and upcoming programs.

Furthermore, the two sides agreed to continue their cooperation and dialogue on the issues discussed and other matters concerning the Armenian-Canadian community.

Minister Rodriguez also visited Horizon Weekly's Editorial office. Editor Vahakn Karakachian thanked the Heritage minister and the ministry for granting Horizon Weekly through the Aid to Publishers program for the past 8 years.

Armenian flag raised on Mt. Kilimanjaro

LOS ANGELES—Anthony Ghanime, a 27-year-old Glendale resident, recently climbed the tallest peak in Africa—Mt. Kilimanjaro. A Chamlian and Rose & Alex Pilibos School alumnus, Anthony traveled to Africa on

July 9. The trek to the summit of Mt. Kilimanjaro took a total 8 days, from July 11 to 18. When he reached the summit, Anthony raised an Armenian flag that he had kept in his Pilibos fanny pack throughout his climb.

Armenian Genocide documentary nominated for Emmy

